ՀՏԴ 316.334.3 (479.25)

Ն.Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դիտարկվում է հաշտարարությունը (մեդիացիան) որպես վեճերի լուծման այլընտրանքային ինստիտուտ: Հաշտարարի ինստիտուտը հասարակական հաշտության գաղափարական կամ արժեհամակարգային մակարդակն է: Հաշտարարը (մեդիատորը) վեճի արդյունքում չի կայացնում որոշում, որը հատուկ է դասական արդարադատությանը, այլ փորձում է իրավաչափ և փոխշահավետ լուծումներ փնտրել կողմերի համար: Հենց այս ճկունության մեջ է հաշտարարության ինստիտուտի արդյունավետությունը:

Առանցքային բառեր. հաշտարար, հաշտարարություն, դատարան, այլընտրանքային, վեճ:

Յուրաքանչյուր հասարակության ներսում առաջանում են անհամաձայնություններ և կոնֆլիկտներ, որոնք խաթանում են այդ հասարակության զարգացման բնականոն ընթացքը: Հաշտարարությունը (մեդիացիան) վեճերի լուծման այլընտրանքային ինստիտուտ է, երբ մի երրորդ անձ կողմերի կողմից ներգրավվում է վեճի մեջ և փորձում է կողմերին հաշտեցնել՝ առաջարկելով երկուստեք շահավետ և ընդունելի լուծումներ, խթանելով նրանց միջև հնարավոր շփումները: Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի 227.1 հոդվածի համաձայն. «Հաշտարարն այն անձն է, որը, որպես անկողմնակալ երրորդ անձ, հաշտարարության վերաբերյալ համաձայնության հիման վրա իրականացնում է հաշտարարություն՝ կողմերի միջև ծագած վեճը հաշտությամբ լուծելու նպատակով:...» [1]:

Հայտարարության ինստիտուտի նախատիպերը կարելի է գտնել դեռևս Հին աշխարհի երկրներում: Այդ առումով հայտնի է Հուստինիանոս կայսեր օրենսգիրքը, որով կարգավորվել է նաև հաշտարարի ինստիտուտը, այն միջնորդի, որի նպատակն է լուծել կողմերի միջև ծագած վեճը և հաշտեցնել նրանց: Այս միջնորդին նկարագրելու համար հռոմեացիները օգտագործել են բազմաթիվ տերմիններ՝ internuncius, medium, intercessor, philantropus, interpolator, conciliator, interlocutor, interpres և, վերջապես, mediator: Հաշտարարությունն իր այսօրվա տեսքով հայտնի դարձավ անցյալ դարի երկրորդ կեսից, երբ զարգացած տարբեր երկրներում սկսեցին թափ առնել վեճերի լուծման այլընտրանքային եղանակները: Սկզբում անգլո-սաքսոնական իրավունքի երկրներում, այնուհետև նաև ամբողջ աշխարհում արագ զարգացում ապրած այս ինստիտուտը

դարձել է դատարանների բեռնաթափման, մասնագիտական հատուկ գիտելիքներ պահանջող վեճերի արագ լուծման արդյունավետ միջոց: Ըստ տարբեր վիճակագրական տվյալների՝ հաշտարարության միջոցով լուծվող վեճերի գերակշիռ մասը տևում է ընդամենը մի քանի օր: Հայաստանում այս ինստիտուտը ժողովրդականություն չի վայելում: Դա պայմանավորված էր կարգավորող իրավական դաշտի բացակայությամբ, սակայն վերջինիս ձևավորումն արդեն սկսվել է, մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 31.1 գլուխում սահմանվում է հաշտարարարների իրավական կարգավիճակը, ՀՀ Քաղաքացիական դատավարության 22.3 գլխում տրվում են.

-«հաշտարարություն» հասկացությունը,

-հաշտարարին ներկայացվող պահանջները,

-հաշտարարի՝ վիճելի իրավահարաբերության տարբեր փուլերում (դատական, արտադատական) ներգրավման հնարավորությունը և կարգը,

-հաշտարարական հաշտության համաձայնությունների չկայանալու դեպքում կիրառելի մոդելը, ըստ որում, կախված այն հանգամանքից, թե հաշտարարական հաշտության համաձայնությունը կնքվել է դատարանի կողից նշանակված հաշտարարության արդյունքում, թե կողմերի միջև՝ անկախ դատարան դիմելը,

-դատական ծախսերի վերադարձման խնդիրները, երբ կողմերն ի սկզբանե դիմում են դատարան, սակայն վեճը հաշտարարության արդյունքում լուծվում է համաձայնությամբ:

Մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 227.3 հոդվածը սահմանում է.

«Հաշտարարն իրավունք ունի՝

1) հաշտարարության ընթացքում հանդիպումներ կազմակերպելու ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին.

2) գովազդելու իր հաշտարարական ծառայությունները.

3) ստանալու իր ծառայությունների դիմաց վճար, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի.

4) ազատորեն կիրառելու օրենքով չարգելված հաշտարարության մեթոդներ:

2. Հաշտարարը պարտավոր է՝

1) մինչև հաշտարարություն սկսելը հաշտարարության կողմերին պարզաբանել կողմերի իրավունքները և պարտականությունները.

2) հրաժարվել հաշտարարություն իրականացնելուց, եթե գտնում է, որ իր մասնակցությունը հաշտարարության գործընթացը կհանգեցնի հաշտարարության որևէ սկզբունքի խախտման.

3) պահպանել հաշտարարության սկզբունքները և վարքագծի կանոնները:...» [1]:

Իսկ Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի 149.11-ի համաձայն. «...Եթե կողմերը հաշտարարության վերաբերյալ համաձայնությամբ կամ այլ կերպ չեն սահմանել հաշտարարին ընտրելու ընթացակարգ, ապա հաշտարարի ընտրությունը կողմերը պետք է իրականացնեն վեճը առաջանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե կողմը խուսափում է հաշտարարի ընտրությունից, ապա մյուս կողմն իրավունք ունի դիմելու իր բնակության վայրի դատարան՝ հաշտարար նշանակելու խնդրանքով: Եթե կողմերը չեն կարողանում ընտրել հաշտարար, ապա իրավունք ունեն դիմելու դատարան՝ արտոնագրված հաշտարար նշանակելու մասին դիմումով: Դիմումը պետք է պարունակի սույն մասով նախատեսված տեղեկություններ, դիմումին պետք է կցվի հաշտարարության համար հիմք հանդիսացող ապացույցը, ինչպես նաև ստորագրվի դիմող անձի կամ լիազորված անձի կողմից: Դիմումը և կից փաստաթուղթը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, դատարանը նշանակում է արտոնագրված հաշտարար, եթե դիմումը համապատասխանում է սույն մասով սահմանված պահանջներին:...» [2]:

Հարկ է նշել, որ դատարանները չունեն վեճերի լուծման այնպիսի ճկուն մեխանիզմներ, ինչպես հաշտարարի ինստիտուտը, որը կողմերին ցուցաբերում է անհատական մոտեցում՝ այդպիսով վեճերը խիստ ֆորմալ իրավական ընթացակարգերից իջեցնելով ավելի միջանձնային, անմիջական մակարդակ և, խթանելով հոգեբանական մոտեցումները, նպաստում են և մշակում լուծման առավել արդյունավետ և ընդունելի տարբերակներ: Բացի այդ ,հաշտարարի ինստիտուտն ավելի մատչելի է, ֆինանսական սակավ բեռով, ինչով էլ պայմանավորվում է դրա արդյունավետությունը: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել՝ հաշտարարի ինստիտուտը հասարակական հաշտության գաղափարական կամ արժեհամակարգային մակարդակն է, որը երկարաժամկետ առումով կարող է հանգեցնել դրական արդյունքների:

Հայաստանում և այլուր հաշտարարի ինստիտուտի կայացման և զարգացման գործում առաջնային դերակատարություն ունեն ոչ այնքան դատարանները՝ իրենց դատավարական լիազորությունների շրջանակում կողմերին ուղղորդելով դեպի հաշտարարների գրասենյակներ, այլ օրենսդրական մակարդակով հարկ է ձևավորել այնպիսի ինստիտուցիոնալ և նորմատիվային կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան վեճերի լուծման այդ՝ արդեն առաջադեմ երկրներում լայն տարածում ստացած,այլընտրանքային եղանակի կիրառումն իրականում արմատավորել ներպետական իրավագիտակցական մշակույ-

թում: Այդ առումով թերևս որոշ դատավորներ, որպես սկզբնական մեկնակետ, առաջարկում են որոշակի վեճերով/ալիմենտային, ամուսնալուծության, երեխայի խնամքի և դաստիարակության, բնակության վայրի որոշման, ինչպես նաև առանձին ժառանգական և ընդհանուր սեփականության առանձնացման վեճերով/ հաշտարարի ինստիտուտի կիրառումը, որպես մինչդատաքննության գործընթաց, օրենքի ուժով դարձնելու դատավարական ինքնուրույն և պարտադիր փուլ: Սա նույնպես հեռանկարային այն լուծումներից է, որը կնպաստի՝ այս ինստիտուտը բարձրացնելու ևս մեկ մակարդակով: Պետք է նշել, որ հաշտարարը (մեդիատորը) վեճի արդյունքում չի կայացնում որոշում, որը հատուկ է դասական արդարադատությանը, այլ փորձում է իրավաչափ և փոխշահավետ լուծումներ փնտրել կողմերի համար: Հենց այս ճկունության մեջ է հաշտարարության ինստիտուտի արդյունավետությունը:

Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի 149.13 հոդվածը այս դեպքում սահմանում է, որ. «1. Յուրաքանչյուր կողմ, ինչպես նաև հաշտարարը, ցանկացած պահի կարող է դադարեցնել հաշտարարության գործընթացը:

2. Հաշտարարության գործընթացն ավարտվում է կողմերից առնվազն մեկի կամ հաշտարարի կողմից գործընթացը դադարեցնելով կամ հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնություն կնքելու միջոցով: Հաշտության համաձայնություն կնքելու դեպքում դրա մեկական բնօրինակ տրվում է կողմերին, և ևս երկու բնօրինակ պահվում է հաշտարարի մոտ:

3. Դատարանի նշանակած հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնություն կնքելու դեպքում արտոնագրված հաշտարարը պարտավոր է հաշտության համաձայնությունը ստորագրելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցել դատարանին՝ կցելով հաշտության համաձայնության բնօրինակը:

4. Եթե հաշտության համաձայնությունում առկա է գաղտնիության վերաբերյալ պայման, որով հաշտարարության կողմերը համաձայնել են առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ, ապա արտոնագրված հաշտարարը կողմերի համաձայնությամբ հաշտության համաձայնությունը ստորագրելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է դատարանին վեճը հաշտարարությամբ լուծելու և գաղտնիության պայմանի մասին: Առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ միջնորդությունը կողմերը ներկայացնում են համատեղ, իսկ նման միջնորդության բացակայության դեպքում դատարանը շարունակում է գործի քննությունն ընդհատման պահից:...» [2]:

Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտի ներդրման գործում իր ակտիվ գործունեությամբ ճանաչված իրավաբան Մուշեղ Մանուկյանի կարծիքով օրենսդրական դաշտի մասով Հայաստանը էականորեն առաջ է անգամ ամենազարգացած երկրներից...[3]:

Սակայն, ըստ մեզ, բացի իրավական կարգավորումներից, անհրաժեշտ է նաև խթանել հասարակության վստահությունը, առանց որի հնարավոր չէ գործարկել նույնիսկ լավագույն գաղափարները: Ուստի, իրավական վերոնշյալ կարգավորման նպատակն է հաշտարարության ինստիտուտի ներդրումը և, որպես իրավական, և որպես սոցիալական ինստիտուտի:

Հաշտարարության օրենսդրության ընդունումից հետո շուրջ մեկ տարի Հայաստանի Հանրապետությունում հաշտարարությունը կարծես սառեցված վիճակում է. հաշտարարները մեղադրում են դատարաններին, որ վերջիններս գործեր չեն ուղղորդում փաստաբաններին, որ խոչընդոտում են զարգացմանը, դատարանները՝ փաստաբաններին, փաստաբանները՝ հաշտարարներին: Որևէ իրական գործ, ըստ էության, դատական դեպարտամենտում չի գրանցվել, ուստի ս.թ. օգոստոսի 11-ից սեպտեմբերի 03-ը Եվրոպայի Խորհրդի ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է դատարանին կից հաշտարարության պիլոտային ծրագիր, որի նպատակն էր ցույց տալ հաշտարարության արդյունավետությունը և դրա առավելությունները բոլոր մասնակիցների համար՝ դատարաններ, կողմեր, փաստաբաններ և այլն:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հաշտարարության զարգացման հեռանկարները, որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակ, ըստ մեզ, իրականում անհրաժեշտ է փնտրել՝ արմատավորելով այն ներպետական իրավական մշակույթում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ դատական օրենսգիրք, Ե. 2017,
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Ե. 1999,
3. www.adt.am:

Н.М. АЙВАЗЯН

ПОХОДЫ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ИНСТИТУТА МИРОИЫХ СОГЛАШЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Можно сказать, что институт мировых соглашений– это система идейных или оценочных уровней общественных соглашений. Необходимо отметить, что мировой судья не принимает решения в разрешении конфликта (это является особенностью традиционного правосудия), а пытается найти взаимоприемлемое и взаимовыгодное решение для обеих сторон. В этом и заключается эффективность института мировых соглашений.

Ключевые слова: медиатор, медиация, суд, альтернативный, конфликт.

N.M. AYVAZYAN

THE APPROACHES AND PERSPECTIVES OF THE MAGISTRACY INSTITUTE IN REPUBLICE OF ARMENIA

Magistracy is an alternative institution for solving conflicts. On the whole, one can say that the Magistracy Institute is the ideological or the value system level based on public reconciliation. It should be mentioned that the Magistrate does not make any decision as a result of the conflict which is peculiar to classical judicial system, but tries to find legitimate and mutually beneficial solutions for the parts. This very flexibility is the efficiency of the Magistracy Institute.

Keywords: magistracy, court, alternative, conflict.

УДК 005.583.3

С.Г. МАНТАШЯН

К ПРОБЛЕМЕ УПРАВЛЕНИЯ МОТИВАЦИЕЙ ТРУДА В СОВРЕМЕННЫХ ОРГАНИЗАЦИЯХ

Рассматриваются межкультурный аспект мотивации труда, а также ценности и различные культурные нормы постиндустриального общества.

Ключевые слова: мотивация и стимулирование персонала, управление, культура, ценности, практики.

Во второй половине XX века развитые страны вступили в новую стадию развития, так называемую постиндустриальную. Ее также называют информационным, информациональным обществом знаний [1-3]. Главными чертами являются знание, компетенция, коммуникация, а главную роль в нем будут играть уже не рабочий класс, а предприниматели, служащие, интеллигенция.